Տ. ԴԵՐԵՆԻԿ ԱԲԵՂԱ ԴԱՎԹՅԱՆ

Ծնվել է Կապան քաղաքում 1966 թ. ապրիլի 23-ին, ավազանի անունը՝ Արծվի:

1973-83 թթ. սովորել և ավարտել է տեղի հմր. 6 միջնակարգ դպրոցը:

1983-85 թթ. ընդունվել և ավարտել է Երևանի հմր. 8 Գեղարվեստի ուսումնարանը:

1986-88 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1988-91 թթ. ծառայել է Կապանի շրջանի Գեղանուշ գյուղի Ս. Հռիփսիմե եկեղեցում, որպես դպիր:

1991 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1992 թ. հունվարի 18-ին Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանքում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1995 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Սյունյաց եպիսկոպոսական Աթոռի պայքարը ունիթոռների դեմ 14-15-րդ դդ.» թեմայով, և արժանացել «լավ» գնահատականի:

1995 թ. նոյեմբերի 12-ին Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի: